ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 12 >> նոյեմբերի 2013թվականի N 114 -Ա

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ-ԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕԲՅԵԿՏԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԵՎ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ԳԱՆՁՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻ ՓՈԽԱՐԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ <<Գյումրու բժշկական կենտրոն>> Փակ Բաժնետիրական Ընկերության գործադիր տնօրեն Արմեն Իսահակյանի գրությունը (քաղաքապետարանում մուտքագրված՝ 05.11.2013թվականին Գ 2568)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու բժշկական կենտրոն>> Փակ Բաժնետիրական Ընկերությանը շինարարության թույլտվություն տալու համար նախատեսված տեղական տուրքը՝ 70000 (յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ և շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում օբյեկտի հարակից տարածքներում և փողոցներում սանիտարական մաքրման գործընթացը կազմակերպելու նպատակով շինարարության թույլտվություն ձեռք բերելու ժամանակ գանձվող տեղական վճարը՝ 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 1.570.000 (մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ վճարել համայնքի բյուջեի միջոցներից:

Կողմ (20) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ա.Ադամյան_____

Գ.Ադամյան_____

Ա.Բաղեյան _____

Ա.Բաղրամյան_____

Լ.Բարսեղյան_____

Մ.Գաբոյան_____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եղիգարյան _____

Գ.Թաթարյան_____

Հ.Խաչատրյան _____

Հ.Կարապետյան_____

Տ.Հովհաննիսյան_____

Վ.Հունանյան_____

Ն.Մեսրոպյան_____

Ռ.Մխիթարյան_____

Է.Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Ե. Պողոսյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

2013թ. նոյեմբերի 12

ք.Գյումրի